ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ
Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոս փ. 2ա, հեռ. (+374 12) 55 55 55
էլ. փոստ info@finca.am
Հաշվետվություն թիվ 1, 01.02.2022թ.

"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":

ստորագրող անձինք՝

Հարություն Չադրյան	**Վարչության անդամ, Իրավաբանական վարչության ղեկավար**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Անուշ Պետրոսյան	**Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն**		01/02/22
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում եմ՝

Արամ Ղազարյան	**Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն**		01.02.2022.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

01 փետրվար 2022թ.

Տեղեկանք

Համաձայն «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի 25/01/2022թ.-ի թիվ 03/2022 որոշման՝ տնօրենների խորհրդի անդամները, հիմք ընդունելով 28/10/2021թ. թիվ 34/2021 և 17/12/2021թ. թիվ 41/2021 որոշումները, որոշեցին.

1. Հաստատել 1,400,000,000 (մեկ միլիարդ չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային ընդհանուր 140,000 (մեկ հարյուր քառասուն հազար) պարտատոմսերի առաջին փուլի թողարկումը երեք տարի ժամկետով, 12% (տասներկու տոկոս) տարեկան տոկոսադրույքով:

2. Տեղաբաշխումն իրականացնել «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, որից 1,190,000,000 (մեկ միլիարդ մեկ հարյուր իննսուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով 119,000 (մեկ հարյուր տասնինը հազար) հատ պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել ստանդարտ փակ աճուրդի անցկացման միջոցով՝ ընդ որում բացառելով ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտերի ներկայացումը, իսկ մնացած 210,000,000 (երկու հարյուր տասը միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 21,000 (քսանմեկ հազար) հատ պարտատոմսերը ձեռք է բերվելու «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ կողմից անվանական արժեքով՝ որպես շուկա ստեղծող՝ երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիության և ներդրումային գրավչության բարձրացման նպատակով:

3. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել 2022 թվականի փետրվարի 10-ին՝ մեկանգամյա աճուրդի անցկացման միջոցով՝ համաձայն սույն որոշմանը կից Հավելված 1-ում ներկայացված թողարկման վերջնական պայմանների: